Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Գավառ 01.09.2025թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ն / այսուհետ՝ քոլեջ/ ի դեմս տնօրեն Մարգարիտ Ստեփանի Գնդոյանի, որը գործում է համաձայն քոլեջի կանոնադրության՝ մի կողմից «----------» մասնագիտության ---- կուրսի ուսանող ---------ի (այսուհետ՝Ուսանող) ծնող_____ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1.Պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության և Կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի՝ կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, քոլեջի կանոնադրությունը, քոլեջի ներքին կարգապահական կանոնները, ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2.1.Պայմանագրի առարկան Ուսանողի՝ առկա ձևով, միջին մասնագիտական կրթական ծրագրով **<u>անվճար</u>/վճարովի** ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

2.2. Ուսանողի ուսումնառության ժամկետը -- տարի է:

ՔՈԼԵՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

3.ՔՈԼԵՋՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

3.1.Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու քոլեջի գրադարանից, մարզական և առողջարանական կառույցներից, ընթերցասրահից, նիստերի դահլիճից, սննդի և սոցիալական այլ ծառայություններից:

3.2.Ուսանողի կրթության և դաստիարակության գործընթացն ապահովել բարձրակարգ մասնագետներով, դասավանդման ժամանակակից մեթոդներով, դասագրքերով, ուսուցման տեխնիկական միջոցներով, ուսանողին տալ մասնագիտական կրթություն:

3.3.Նախնական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տալ ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:

3.4.Ստեղծել հավասար պայմաններ՝ առաջադիմության բարձրացման համար թե՛ անվճար և թե՛ վճարովի համակարգում կրթություն ստացող ուսանողների համար:

3.5.Սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողին փոխադրել անվճար ուսուցման համակարգ և հակառակը:

3.6.Օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու, ինչպես նաև ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքում Ուսանողի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ, ընդհուպ մինչև քոլեջից հեռացնելը:

3.7.Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում Ուսանողին հեռացնել քոլեջից:

3.8 Որևէ կիսամյակում անհարգելի 120 ժամ, իսկ հարգելի 160 ժամ անընդմեջ բացակայության դեպքում ուսանողի կիսամյակային գնահատականը չնշանակել՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից և հեռացնել քոլեջից:

3.9 Ամսվա ընթացքում անհարգելի 72 ժամ բացակայության դեպքում ուսանողին զրկել տվյալ ամսվա կրթաթոշակից:

4.ՔՈԼԵՋԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է.

4.1.Կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի (մոդուլների) համաձայն:

4.2.Ուսումնառության տարիներին ապահովել ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող հնարավոր բոլոր պայմանները:

4. 3.Ուսանողներին ծանոթացնել քոլեջի ներքին կարգապահական կանոններին և այլ ակտերին:

Created by Universal Document Converter

4.4.Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում Ուսանողին շնորհել համապատասխան որակավորում և տալ ավատական փաստաթուղթ՝ դիպլոմ:

ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

5.ՈՒՍԱՆՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

5.1.Ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

5.2. Մասնակցել ուսումնագիտական, հետազոտական աշխատանքներին, ժողովներին և այլ միջոցառումների:

5.3.Սահմանված կարգով օգտվել քոլեջի գրադարանից, լաբորատորիաներից և այլ ստորաբաժանումների ծառայություններից:

5.4.Սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ և հակառակը:

5.5.Մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները:

5.6.Սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով:

5.7.Քոլեջում բարձր առաջադիմություն ցուցաբերելիս կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում:

5.8.Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողը ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվել ուսուցման նույն համակարգում

5.9.Սահմանված կարգով ընդգրկվել Խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին:

5.10.Ծանոթանալ քոլեջի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և այլ փաստաթղթերին:

5.11.Ստանալ ուսանողական նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.12.Ստանալ կրթաթոշակ՝ գերազանց և լավ առաջադիմության համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

6.ՈՒՍԱՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

6.1.Կատարել քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները, պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները:

6.2.Խնամքով վերաբերվել քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը:

6.3.Վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը:

6.4.Կատարել կրթական ծրագրերի պահանջները:

6.5.Հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին:

6.6.Բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը:

6.7.Անվճար ուսուցման կարգավիճակը կորցնելու դեպքում համապատասխան կուրսի համար նախատեսված վարձավճարի չափով և սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

6.8.Անկախ ուսումնառության ընդհատման պատճառից մարել ուսման վարձի և /կամ գրադարանի պարտքը:

6.9.Խստորեն հետևել ակադեմիական բարեվարքության սկզբունքներին և կանոններին, հարգալից վերաբերվել բոլոր անձանց:

6.10.Պահպանել քոլեջի անդորրը, տարածքների մաքրությունը, չծխել քոլեջում և թույլ չտալ ուսումնական գործընթացի հետ անհամատեղելի այլ արարքներ:

6.11.Հետևողական լինել, որպեսզի սահմանված ժամկետում և կարգով դիմել՝ ուսման վարձի փոխհատուցմանը որևէ հիմքով հավակնելու, ինչպես նաեւ ուսումնառության դադարեցումը ձեւակերպելու դեպքերում: Սույն կետի պահանջները չկատարելու դեպքում Ուսանողն է կրում իր համար առաջացող բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները:

Created by Universal Document Converter

7. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ուսանողը ընդունվել է **անվճար** համակարգ:

Վճարովի համակարգում սովորող Ուսանողի ուսման տարեկան վարձը քոլեջի կողմից սահմանվում է --------- դրամ: Եթե Ուսանողը, ուսումնառության որևէ փուլում հավակնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման, ապա վերջինիս ձևակերպումը և հաշվարկները կատարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Ուսման վարձը չվճարելու դեպքում Ուսանողը պարտավոր է վճարել առնվազն տվյալ ամսվա վարձավճարը, որը հաշվարկվում է տվյալ կիսամյակում ներառված ամիսների վրա բաժանելով: Յուրաքանչյուր ամիս վճարելու պարագայում Ուսանողը պարտավոր է վճարումը կատարել մինչև տվյալ ամսվա ավարտը:

7.3. Վճարովի համակարգում ընդունված կամ, ուսումնառության ընթացքում օրենսդրությամբ սահմանված հիմքերով վճարովի համակարգ տեղափոխված Ուսանողի համար, սահմանված ուսման վարձը հաստատուն է ուսանողի՝ տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ ուսանողի նախաձեռնությամբ տեղափոխության (շարժունության), ինչպես նաեւ՝ ուսանողի մեղքով ուսումնառության դադարեցումը պատշաճ չձևակերպվելու դեպքերի: Քոլեջից հեռացված (ազատված), այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողներն ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով:

7.4. Ուսման վարձը վճարվում է անկանխիկ, քոլեջի հաշվարկային հաշվին՝ 900178000353 ՀՎՀՀ 08402239 : Ուսանողը պարտավոր է վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել համապատասխան ստորաբաժանում:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է տվյալ կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար:

8.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ, Կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով ՀՀ օրենսդրության նյութական և դատավարական նորմերի կիրառմամբ:

9.2. Ուսանողի նախաձեռնությամբ կամ մեղքով Պայմանագիրը լուծվելու դեպքում տվյալ փուլի վճարված ուսման վճարը չի վերադարձվում:

9.3. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է Տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Քոլեջից հեռացվելը:

9.4. Ուսման վարձը չմուծած ուսանողը չի թույլատրվում մասնակցել քննաշրջանին:

9.5. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.6. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Ուսանողին (ներկայացուցչին), իսկ մյուսը՝ քոլեջին:

10. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Ուսանողի	*«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ*
Օրինական ներկայացուցչի	Հասցե՝ ք. Գավառ, Ազատության 38, հեռ. 2-34-02
*Ստորագրություն*_____	Բանկը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն
Անձնագրի	ՀՎՀՀ 08402239 Հ/Հ 900178000353
Սերիա _____Համարը_____	
Երբ է տրված _____	
Ում կողմից _____	Տնօրեն՝ Մ. Գնդոլյան
Հասցե _____	
Հեռ._____	

Created by Universal Document Converter